

Թիւն մ'եղած է, և մեք պահպան
նորական գրիչներ տեսած ենք, որք
այդ վիճակաւ լին վրայ հիմնելով,
հայասէր հեղինակներ հարուածած
են: Յուսարի է որ Պ. Թրօթթըր երկրին
վիճակն ու պատմութիւնն և Ստանա-
մէներն աւելի լաւ ուսումնասիրելով,
աւելի ճիշդ տեղեկութիւն կուտայ
իւր կառավարութեան և հայրենակ-
ցաց: Այսու ամենայնիւ տխուր բան
է տեսնել որ Անգղիական ժողովուրդ-
ը՝ մինչև նոր կապոյտ տետրակի մը
հրատարակութիւնն, այսինքն ամբողջ
ամիսներ, արդի կապոյտ տետրակին
ուսմանը չեն ներգրծուած: Այսինքն
որ ուրիշ ինչ ինչ նկատմամբ ալ ան-
նշտապատ է մեր ազգին համար:

Եստ. քէ չընդուն համար՝ կողմէ
վաղը թի հետեւի իւր պաշտօնական
հրատարակութեանց մէջ ՚ի մասին
բաղմամբութեան Ասիական թուր-
քիոյ: Ներկայ պարագային մէջ, վա-
ղը թի և Ստանամէ համայնի բառեր
են, ինչպէս ամեն ոք գիտաւ կըր-
նայ համարել Օսմանեան պաշտօնա-
կան տարեցոյցին թիւերը թուրք լը-
րագրին թիւերուն հետ բաղդատե-
լով: Վաղը թի հրատարակութիւն-
ներէն կը տեսնենք թէ

Նահանգ. ք	Քրիստոնեայ	Խալամ
Վան	103,376	144,538
Կարին	55,049	197,768

արու կը պարունակեն:

Այս թիւերը Պ. Թրօթթըրի հետե-
ւալ թիւերուն հետ բաղդատելով,
որք նոյնպէս Ստանամէն քաղաւած
էին,

Նահանգ. ք	Խալամ	Քրիստոնեայ
Վան	126,208	97,555
Կարին	197,768	55,043

Կը տեսնենք թէ այս երկու թուրք
վիճակագրութեանց մէջ կարնոյ նա-
հանգին բնակաց թիւը նոյն է. իսկ
վանայ նահանգին մէջ 126,208 իս-
լամայ վրայ 18,330 հոգւոյ, իսկ
97,555 Քրիստոնեայ վրայ 3821 հոգ-
ւոյ յաւելում մ'եղած է: Ստանամէն
խաչոր սխալներն ու թերութիւններն
երեւան հանուելէ, և Թրօթթըր հա-
ղարարեալ ինք ևս ընդունելէ ետե-
թէ Հայաստանի այս դաւառաց մէջ
Քրիստոնեայ թիւն 100ին 40ին չափ նը-
ուաղ հաշուած է, աւելորդ է յայտ-
նել թէ մեք պարզապէս հետաքրք-
րութեան համար մեր ընթերցողաց կը
ներկայեմք այս պաշտօնական թիւե-
րն, ինչպէս նաև հետեւեալ թիւերն
ու տեղեկութիւնները՝ զորս վաղը թի
հրատարակութիւններէն կը քաղենք:

Քար-Բերդի Միւլէխարըրթիւ-
թեան մէջ, որ ո՛ր է վիլայէթի կապ-
ւած չէ, և որ 140,766 իսլամ և 48713
Քրիստոնեայ արու բնակիչ ունի,
Խալամ տարբին հետ բաղդատմամբ
Քրիստոնեայ տարբին մեծամասնու-
թիւն կամ գոնէ հաւասարութիւն
ունեցած կեդրոններն են Գէպան,
Չմիլածագ, Բերդի, Բերնէք, Արապ-
կիր, Ալին, Մատին, Էրզնան, Ճըն-
քուշ, Բայր և այլն: Քար-Բերդ քա-
ղաքին մէջ Քրիստոնեայք իսլամաց
կէսէն քիչ աւելի են: Քար-Բերդի Միւ-
լէխարըրթիւթիւն երկու Սանճագ-
ներէ կը բաղկանայ, Քար-Բերդի Սան-
ճագ և Էրզնանայի Սանճագ: Առաջին
մէջ Քրիստոնեայք գերթէ հաւասար
թիւով են, Տիւրիկի քաղաքին մէջ
Քրիստոնեայք թիւն իսլամաց կիսուն
չափ է, իսկ գիւղերէն մէջ մէկ երկ-

րորդէն քիչ պակաս: Քրիստոնեայ քա-
ղաքին մէջ իսլամք Քրիստոնեայք կի-
սուն չափ են: Ամասիո քաղաքն
75500 բնակիչ ունի, որոց 4,400 ն
իսլամ է:

Վան քաղաքն և շրջակայ գիւ-
ղոցայն ունին 23,365 Քրիստոնեայ,
իսկ միայն 10,033 իսլամ բնակիչ:
Վաղը թի վանայ Սանճագին ուրիշ
Գայմադամութեանց մէջ Քրիստոնե-
այ մեծամասնութիւն չափար. յիշեալ
Սանճագը կը պարունակէ 35,349 Քր-
իստոնեայ և 40,897 իսլամ. Հէք-
քարի Սանճագն ունի 25,618 Քր-
իստոնեայ և 44,262 իսլամ: Մուշ
քաղաքն և շրջակայ գիւղերէն ունին
21,720 Քրիստոնեայ և 46,600 իսլամ
բնակիչ: Իսկ ամբողջ Մշոյ Սանճագը
42,409 Քրիստոնեայ և 59,378 իսլամ
կը պարունակէ:

Վաղը թի կարնոյ նահանգին վիճա-
կագրութեան մանրամասնութիւնն
ըլ չափար:

Գիտելի է որ ոչ միայն, ինչպէս
նաև վահան վարդապետ ալ կը յիշե-
իւր գրութեան մէջ, նիւթական ջան-
քեր եղած են և կը լինին Հայ տար-
բն Հայաստանէն ջնջելու, այլ և ար-
ուեստական ամեն միջոց ի գործ կը
գործի Հայոց բաղմամբութիւնը
նշանակութեան գրելու: Այսպէս մինչ
մէկ կողմէն Ստանամէներուն անտեղի
և կոշտ սխալները կը տեսնենք, միւս
կողմէն վիլայէթներու բաժանումնե-
րն ուսումնասիրելով կը տեսնենք
որ բազում Հայաբնակ Գաւառք, որոց
բնական գիւղերը զիրենք կարնոյ և
վանայ նահանգաց հետ կը կապէր,
և որք այդ նահանգաց մէջ մնալով
Քրիստոնեայ տարբը կրնային բաժնու-
րացնել, դիտմամբ Տիարպէքիի և
Տրապիզոնի նահանգաց հետ կապուած
են, որպէս զի Թրքաց և Գրգաց
բաղմամբեան մէջ կորսուի իրենց թի-
ւը: Ընդհակառակն, բազում թուր-
քաբնակ և Գրգաբնակ գաւառներ, ա-
ռանց իրենց բնական գիւղքն ի նկատ
առնելու, վանայ և կարնոյ նահան-
գաց հետ միացուցուած են: Մշոյ և
Տիարպէքիի, կարնոյ և Գարբէրդի,
Տրապիզոնի և կարնոյ միջև այս օրի-
նակ հնարեմտութիւնք շատ կը
տեսնուին:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Պեքրէ 29 նոյ.
Երկու ժողովոց դեռաները կազմե-
ւեցան Է Մեծամասնութիւնը կառավա-
րութեան նպաստաւոր է: Պ. Տիւրքիոս
Վիքա Մերախուտի ժողովին նախագահ
անուանեցաւ:

Լոնտոն 30 նոյ.
Ճիւղարկութեան հետադիւր մը կը ծա-
նուցանէ թէ Մարդի մէջ անխիտանու-
թիւնը մեծ յառաջդիմութիւն կընէ:
Այս պատճառաւ Ճիւղարկութեան զինու-
թական իշխանութիւնը Մարդի բանա-
կին մէջ իրեն մարդիչ պաշտօն վարող
Անգղիացի սպայից և Թանճէրի ամբու-
թեանց շինութիւններուն օգնող Անգղիա-
ցի զինուորական ճարտարապետաց թի-
ւըն աւելցուցին:

Իրանտայի լրագրիչ Անգղիոյ գէմ
թշնամական յարձակումները կաւեցնեն:
Տրապիզոնի հեռագիր մը կը ծանուցա-
նէ թէ Իրանտայի մէջ յուզումներն Իր-
անտայի լրագրաց տմանց կարծեցընել
ուղածին չափ ընդհանուր չէ:

Նիւ-Յորքի հեռագիր մը կը ծանու-
ցանէ թէ Ամերիկա բնակեալ Իրանտա-
ցիք գումարաւորները իրենց հա-
մակրութիւնը կը յայտնեն Իրանտայի
ազարակալարձնեալ կրած ներութեանց
և հանդատակութիւնները կընեն ազարա-
կատեարց գէմ ելած յուզման նպաստե-
լու համար:

Թրանսպարկայն եկած վերջին լուրե-
րերը կը ծանուցանեն թէ յուզումները

նուազած է, և թէ Անգղիական իշխա-
նութեանց տարբ չվճարելու համար զեն-
քով զինադրելու երկիւղ չէ մնացած:

Վիէննա 30 նոյ.
Երուսթիոյ կողմէ առաջարկուած Ի-
րաւախօսութեան պայմաններն Հունգա-
րիայէն չընդունուելուն վրայ մեծ յու-
զում կը տիրէ Երուսթիոյ մէջ, և ծանր
անկարգութիւնք կ'սպասուին:

Բեղրապոլի 1 դեկտ.
Զրոյց կը պարբեր թէ Ռուսիոյ հա-
մար ազատամիտ Սահմանադրութիւն մը
սխալ հրատարակի ՚ի մօտ: Կը հաւաս-
տեն նաև թէ Պետական խորհրդոյ բու-
լըր անգամբ, ամեն նախարարը և օտար
երկրները գտնուող դեսպանաց մեծ մա-
սըն ՚ի ժողով հրաւիրուած են ՚ի Բեղ-
րապոլի:

Բեղրապոլի 1 դեկտ.
Քրաքով լրագրիչը կը ծանուցանէ թէ
Ռուսական Սահմանադրութիւնը մարտ
2ին պիտի հրատարակի:

Սօֆիա 1 դեկտ.
Կը հաւատեն թէ Պալատիոյ իշխա-
նը խորհրդարանական դժուարութեանց
պատճառաւ հրաժարական պիտի տայ:

Լոնտոն 1 դեկտ.
Այս առաւօտեան Թայմզ հեռագիր
մը կը հրատարակէ ծանուցանող թէ Պալ-
ատիոյ իշխանը Զարին հրաժարելու դի-
տաւորութիւնն իմացիք է Ռուսական կա-
ռավարութենէն:

Ստ. քան.	40 5/8	Փարիզ 1 դեկտ.
Փար.	4866 44	Ստ. քան.
»	4895 43 3/4	Վաղ. քան.
»	1871 58 1/4	»
»	1872 20 1/2	»
»	1873 42	»
»	62 1/4	»
Անգլ. քան.	97 1/4	»

Ստ. քան.	10,77 1/2	Փարիզ 1 դեկտ.
Վաղ. քան.	50 0	80,83
»	»	Նոր
»	»	82,50
»	»	80 0
»	»	115

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝
Պէհէի նախկին կառավարիչ Իդ-
դէթ վաչան Ամասիոյ կառավարիչ.
Միւր-Իւլ-Իմէրա ճէմիլ վաչան
Մշոյ կառավարիչ, և Մարաշի նա-
խարդ կառավարիչ Խալիլ վաչան
Թըրհալայի կառավարիչ անուանե-
ցան:

Երբեմն Զիշթօվայի առեւտրական
դատարանին նախագահ Պետրոս Տ.
Երեմեան էֆէնտին Ստանայի նախնա-
կան դատարանին ընդհանուր գա-
տախաղի օգնական անուանեցաւ:

Երէկ նախարարաց արտաքոյ կար-
գի նկատ մը գումարեցաւ Բ. Գուռն,
և վաղը թի կընէ ինչ կարե-
ւոր բարենորոգմանց փութով գոր-
ծադրութեան վրայ խորհրդակցու-
թիւն եղաւ:

Հաղարի չափ թուրք կանայք,
որոց ամասականները չեն վճարուած
և սրբ վերջին ծայր թշուառութեան
մէջ են, ուրբաթ օրը վեհ. Սուլթանին
աղերսագիր մատուցին, որուն Ն.
Վեհափառութիւնը մասնաւոր ու-
շաբուրթիւն ընծայեց: Կըսուի թէ
վեհ. Սուլթանն ՚ի պատասխանի իւր
հարցմանց արուած տեղեկութիւննե-
րէն գոհացելով հրաման քրքր է որ
յանձնախումբ մը կարգուի այս նիւ-
թերուն վրայ քննութիւն ընելու հա-
մար: Հետեւեալ օրն արտաւոյ տե-
սարան մը տեղի ունեցաւ: Կանանց սո-
վալուկ ամբոխն ելանոյց նախարա-
րութեան խորհրդակցանը շրջապատե-
լով անոր հաղաւտները պատուե-
ցին բայց ՚ի վերջոյ խաղաղեան Բոյն
սեղանաւորի մը կողմէն, որ նոյն մի-
ջոցին հոն կը գտնուէր և իւր քրտա-

կին մէջ գտնուած դրամները կանանց
բաշխեց:

Այսու ամենայնիւ, Թէրհէմանը
Հաղարի լրագրին որ նշանաւոր է
իւր այն հաստատութեամբն — սը-
տախօսութեամբ — թէ բարենու-
րոգմանք կատարեալպէս գործադ-
րելու վրայ են այժմ, կրտէ թէ ել-
միտական դանձուս վիճակն ընդհան-
րապէս կարծուածին չափ դէշ չէ:

Կուսինէի յանձման համար Բ.
Դրան տրուած երկրորդ պայմանա-
վան, որ 13 օր էր, անցեալ հինգ-
շաբթի օրէն սկսած է և նոյ. ամսոյ
հետ կը լրանայ (Հ. Տ.):

Արեւելեան Բուլէթի Եւրոպական
յանձնախումբին Գաղղիական առաջին
պատուիրակ Պարոն Տը Բէնի Եղիպ-
տոսի Գաղղիական ընդհանուր հիւ-
պատոս և քաղաքական գործակա-
տար անուանեցաւ:

Երէկ Սպարտաքիոս Դուռը Զէր-
քէն մը Պէտէլ դրուելու համար Սըհ-
հիէի ժողովին մէջ քննաւորով զինու-
թական ծառայութեան անկարող լի-
նելը կը հասկցուի, և այս որոշումն ի-
րեն կը հաղորդուի: Զէրքէնը զոյս
լսելուն կը կատարի, և իւր կարողու-
թիւնը ցուցնելու համար՝ դաշնիւր
քաշելով Տօթթ. Սըրաքի պէյը,
Ֆայիք վաչան (Տէլլա Սուտա) և եր-
կու զինուորական վերաւորելով կը
փախչի: Բայց կը բռնուի:

Վերաւորելոյ վէրքերը բարեբաղ-
դաբար թեթեւ են կրտուի:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ	
Երէկ իրկուս գոյու եղաւ	11,24
Այս առաւօտ բացուեցաւ	11,46
Հէս օրին	11,42
Բուլէթի երկաթուղի	Քր. 33 40
Թոյթագրում	Լիւր 880

ԸՆԹԱՅՐ ԱՐԺԵԹՊՈՑ

20 Նոյեմբեր	
Ստիլթէ Դէնիւրալի բաժ. Անգլ. լիւր. 4, 9	
» Փոխանակութեան	3, 8
Կ. Պոլսոյ Պանքոյին	6, 10
Քրէտի Դէնիւրալ	4, 8
Փար. 1863	Յոր. —
» 1865	» 68
» 1869	» 66
» 1872	» 20 3/4
» 1873	» 59
Թրամայ	Ստիլթի 3 65

ԸՆԹԱՅՐ ԳՐԱՄՈՑ

20 Նոյեմբեր	
Անգլ. լիւր.	ըր. 109 23
Նորթոն ոսկի	» 87 40
Խոյնիւր Բուս	» 89 20
Գըրմից	» 51 40
Մէճիտիկի տարբերութիւն	» 6 21
Հինգիոց	» 17
Մէթալիք	» 17 20
Պշինձ	» 360

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ

Ազգ. ժողովոյ նիստը՝ որ այս
ուրբաթ պիտի գումարուէր, ինչ ինչ
պատճառաւ գալ շարթուան մնաց:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԵՄԵՆԻՑՈՒՄ

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ

Պէշիքեան Աւետիս անուն փաս-
տաբան ի կենդանութեան անդ հա-
րազատ կնոջ իւրոյ 30 յուլիս 1874
կրկին ամուսնաւորու յանցանքը
գործած ըլլալուն համար նախարդ
Ազգ. կրտսեան Ժողովը պաշտօնա-
կան յայտարարութեամբ ծանուցած
էր ժողովրդեան թէ՛ ինչն և իւր
ապօրինի կինը Ս. Եկեղեցւոյ հաղոր-

